Խորհրդային հոգեբանությունը պիտք է հակագրվի բոլոր մինչմարդացյան և ժամանակակից բուրժուական հոգեբանական ուղղություններին: Ուսանողը պիտք է հասկանա, վոր միայն դիմեկաիկական մատերիալիզմի հիմունքներով լուսաբանվող հոգեբանությունն և հնարավոր զարձնում հոգեկան-զիտակցա-

\* ) Էնկ. Մ. Մագմանյանի հաղմած այս «Մեթոդական ցուցմունքներ»-ն սովորելիութեա հետակայուններին հոգեբանություն առարկայի ինքնուրույն ուսությանը հնարավոր հետացնելու համար:

կան յեւեվուցմաների ճիշտ ուսումնասիրությունը: «Մարքսիզմի հոգին, — ուսումնասիրությունը և մատերիալիստական գիտելիտիկան»: Անա թե ինչու, ինչպես խորհրդային հոգերանությունը, այնպես էլ մյուս գիտություններն իրենց առարկեղներում պետք է հոգներու կերպով կիրառեն դիալեկտիկական մատերիալիզմի հիմունքները:

Այսպիսով, ուսանողը նախքան նոգերանության կոնկրետ կուլտին անցնելը, պարտադիր կերպով պետք և ծանոթանա դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի հիմունքների հետ: Հոգերանության վորոշ հարցերն անմիջապես վերաբերում են նույն գիտիսովայությանը:

Ուսանողն առանց հասկանալու արտացոլման լինինյան տեսության ելությունը, պահիսո-ֆիզիկական պրոբլեմայի մարքսիստական-մոնիստական լուծումը, հնարավորությունն չի ունենա մշակելու և հասկանալու հոգերանության վողջ կուրսը:

Հոգեկանի և ֆիզիկականի փոխհարաբերության խնդիրը պարզաբանելու համար ուսանողը պետք և առաջնորդվի ընկեր Լինինի այս ցուցումով, ըստ վորի հոգե-ֆիզիկական պրոբլեման ունի յերկու (իմացաբանական և հոգեբանական) կողմեր: Դրանից հետո արտացոլման մարքս-լինինյան տեսության տեսանկյան տակ պետք և առաջ բուրժուական-իդեալիստական և մեխանիստական տեսությունների (հոգե-ֆիզիկական գուգահետականության և հոգե-ֆիզիկական փոխազդեցության) քննագատությունը, անշուշտ այդ տեսություններին հակադրելով գիտելիտիկում տեսերիալիստական, մոնիստական - հասկացողությունները (Լինին, «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» եջ՝ 107—108): Բուրժուական տեսությունների քննագատության հետ միասին պետք և քննագատել նաև խորհրդային մի շարք հեղինակների (Բլումսկի, Վիզուալիսկի, Կոռնիլովի) հակամարքսիստական, կեղծ գիտական, մանկաբանական գրույթներն այս հարցերում:

Թիմայի այս մտար մշակումով ուսանողները պետք և կարողանան պարզ պատկերացնել հետեւյալ խնդիրները.

1. Դիալեկտիկական մատերիալիզմի ուսմունքը հոգու մասին: Հոգին բարդ կազմակերպված մատերիայի հատկությունն

ե, վորը մարդու զկայնականալրակտիկ գործունեյության միջոցով արտացոլում է իրականությունը:

2. Միայն գիտելիտիկական մատերիալիզմն է, վոր տալիս և հնարավորություն ճիշտ, գիտականորեն լուծելու հոգու և մարմնի փախհարաբերության գարավոր պրոբլեմը:

3. Հոգի-ֆիզիկական գուգահետականության և հոգե-ֆիզիկական փոխազդեցության տեսությունները հիմնվում են կեղծ հիմունքների փոխական պրոբլեմի և մեխանիցիզմի վրա: Վերջին հաշվով այդ գուգալիստական ակտությունների ներկայացուցիչները հոգին և մարմնին անջատում են իրարից և նրանց դիտում՝ են երբեք իրարից տարբեր յերեխույթներ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԻՆԻՄՈՒՄԸ

1. ՄԱՐՔՍ-Ֆալտանետուրյան քննադատուրյան շուրջ (առաջարանը և նախաբանը):
2. ԵՆԴԵԼԸ-Լյուրվիկի ֆեյերքախ (յերկրորդ պլում):
3. ԼԵՆԻՆ-Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ (եջ՝ 47):
4. Լ. ԲԵՐԻԱԸ-Անդրկովկասի բոլշեվիկյան կազմակերպությունների պամառության հարցի շուրջը (եջ՝ 100—102):
5. Համեկ(ը)կ պատմության համառոտ գասընթաց:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱԲՍԻՄՈՒՄԸ

1. ԼԵՆԻՆ-Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ (եջ՝ 108—117):
  2. «ՄԱՐՔՍԸ և ԵՆԴԵԼԸ արկեստի մասին» (ժողովածու):
  3. ԼԵՆԻՆ-Փիլօսոփիկական տետրադ (стр. 321):
  4. ԿՈՌՆԻՆԼԱՎ-«Հայութանության ձևանարկ»:
- Հոգեբանության մեթոդների և գործնական խնդիրների մասին ուսանողներն ամառային սեսիաների ժամանակ կրթակացուցիչներին դասախոսությունն Գրաէկոր աշխատանքի թեման ՀՀոգեբանության առարկան:

#### ՑՈՒՃՄՈՒՔՆԵՐ Ա ԳԼԽԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Մարդու նոգեկան գործունեյության անառողմ-ֆիզիկոգիական նիմունները

Այս քամֆինը յուրացնել հնարային և միայն այն դեպքում, յերբ ուսանողները կրկնում են անառողմիայի և ֆիզիոգիայի

միջնակարգ դպրոցում դասավանդվող կուրսի այն մասը, վոր վերաբերում և ներվային համակարգությանը և ներքին սեկուլյարի (ներթուրման) գեղձերին հրաժեվ տարրական գիտելիքներ պարագնակ ձևանարկ կարելի յև ուգավել կարանովի «Անասոմիա» գասագրքից:

Առանովը վերոհիշյալ նյութը մշակելիս պետք է աշխատի շատ չտարածվել այլ ամուր և համատառ կերպով յուրացնել ներք վային համակարգությանը վերաբերող հիմնական փաստերը, վորդց հետո միայն նու հնարավորություն կունենա յուրացնելու «Վարդու հոգեկան գործունեյության անատոմոֆիզիոլոգիան հիմունքները» բաժինը:

Այս դուռիւր պետք է մասնաւել հոգեկայալ բաժինների՝

1. Գողագար ներվային համակարգության և նրա փունկցիաների սասին,

2. Մեջեպարներ և եղիքելուներ,

3. Ներվային գրգիռի եյտթյունը,

4. Գլխուղեղի կիսագնդերի կեղելվային շերտի, ուղեղիկի, յերկայնածիդ ուղեղի և վաղնուղեղի ֆունկցիաները,

5. Պավլովի ուսմունքը պայմանական սեփեքսների մային:

6. Գողագար վեղետատիվ ներվային համակարգության մասին:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՄՈՒՄ

1. ԿՈՌՆԵԼԻԱՎ.—«Հոգեբանության ձեռնարկ»;

2. ԿԱԲԱՆԱՎ.—«Մարդու անատոմիան և ֆիզիոլոգիան»:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԻՄՈՒՄ

1. Павлов—Двадцатилетний опыт.

2. Фролов—Академик Павлов и его учение.

Յեթև հնարավոր լինի ձեռք բերել կարելի յև ուստաղութել նաև Դ. Գլուխյանի կազմած Փիզիոլոգիայի առաջադրությունը:

Գրավոր աշխատանք այս գլխի համար հնարավոր և զբել այն գեղորում միայն, յերբ ուսանողն իրեն պատրաստը և զգում փիզիոլոգիայից և անատոմիայից:

#### ՑՈՒՑՄՈՒՆՅԵՆԵՐԻ ԱՆԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Հոգու գարգացումը յեվ մարդու գիտակցության ծագումը

Այս թեմայի հիմնական նպատակն է ցույց տալ վոր մարդու գիտակցությունը պսիխիկայի ամենաբարձր աստիճանն և և հանդիսանում է հասարակական-արտադրական հարաբերությունների արդյունք, վոր մարդու պսիխիկան պատմական յերեվույթ և:

Այս բաժինը մշակելիս, ամենից առաջ, պետք է հասկանալ այն հանգամանքը, վոր հոգեկան հատկությունները հատուկ են վոչ միայն մարդուն, այլև կենդանիններին:

Զհակուրքելով մարդու գիտակցությունը կենդանինների պսիխիկային, միաժամանակ չի կարելի հավասարության նշան գնել նրանց միջև: Յիթե կենդանու խելքի հիմքում ընկած են զուտ բիոլոգիական յերեկութները, վորոնք և պայմանավորում են այդ խելքի զարգացման աստիճանը, ապա մարդու գիտակցությունը սոցիալական և: Գիտակցությունը կարող եր առաջանալ միայն մարդկային հասարակության մեջ, աշխատանքի շնորհիվ և աշխատանքի հետեւանքով: Ոհմ գիտակցությունը, զա իմ հարաբերությունն և իմ միջավայրի հետա: Այդ և պատճառը, վոր մարդկային պսիխիկայի բոլոր հատկությունները, չնչին բացառությամբ (յերազ, հիպնոզ և այլն), գիտակցված են և յենթակա յեն հասարակական-պատմական ուրենքներին: Մարդու գիտակցությունը նրա կեցության, ուեալ կյանքի արտացոլումն և:

Հոգեբանության այն դպրոցը, վորն աշխատում է մարդուն դիտել վերացականորեն, «առնասարած», սոցիալական կոնկրետ միջավայրից, զասակարգային հարաբերություններից դուրս, —գիտական համարվել չի կարող:

Այս բաժնի մշակումով ուսանողները պետք է յուրացնեն հասելվածները.

1. Գիտակցությունը հասարակական հարաբերությունների առանձնահատուկ արդյունքն և և դրա համար ել նու հատուկ և միայն մարդուն:

2. «Իրեն՝ մարդուն ստեղծեց աշխատանքը» (Ենգելը):  
Մարդկանց կոնկրետ նյութական և հասարակական պրակտիկա-  
յից կտրված գիտակցություն վերագրելու հասկացողությունը  
վերացական և անհեթեթ: Դասակարգային հասարակության  
մեջ գիտակցությունն ել դասակարգային և և իրենից ներկա-  
յացնում և տիրող հասարակական հարաբերությունների ար-  
տացոլումը:

3. Գիտակցությունը առաջանալով աշխատանքից, սկզբնա-  
կան շրջանումն ե, վոր անմիջականորեն արտացոլել և աշխա-  
տանքային փոխհարաբերությունները, հասարակության գորգաց-  
ման, նրա բարգացման և նոր կատեգորիաների առաջացման  
հետեւանքով (պիտություն, զանազան իդեոլոգիաներ և այլն)՝  
կյանք հասկացությունն ավելի յիշ բարգանում և և գիտակ-  
ցության սպայմանավորվածությունը նյութական արտադրու-  
թյունով, դասնում և վոչ անմիջական, այլ առաջացող այդ  
աստիճանավորվածության միջոցով:

4. Յերբեք չպետք և մոռանաւ, վոր «Գիտակցությունը վոչ  
միայն արտացրում և կեցությունը, այլ և տկտիվ կերպով ըս-  
տեղծում և նրան» (Լենին): Գիտակցությունն առաջանալով  
աշխատանքից, մարդկային աշխատանքը գարձնում և ծրագըր-  
ված, նպատակահարմար, հեղափոխականացնում և մորդու պը-  
րակտիկան:

Ուստինողը միաժամանակ պետք և հասկանա, վոր ամին մի  
գիտակցությունն հեղափոխական չե, կա գիտակցություն, վորն  
աշխատում և բոլոր միջոցներով. ժամանակավորապես զանդա-  
գեցնել պատմության ընթացքը, ուսակցիոն գիր և խաղում հա-  
սարակական զարգացման համար: Ինչպես նաև կա սուսավոր  
գիտակցություն, վորը պատմականորեն առաջադեմ և, աճող,  
զարգացող: Պարզ ե, վոր այժմ միակ առաջալոր գիտակցու-  
թյունը, կա բանվոր դասակարգի, նրա կուսակցության գիտակ-  
ցությունն ե մարքսիզմ-լենինիզմը:

5. Բուրժուական գիտակցությունը և նրան հետեւող մի  
քանի խորհրդային հեղինակների (Բլումիլի, Կոռնիլով և այլն)  
գիտակցությունը մարդկային հասարակական գործունեյթյունը  
կտրու: և նյութական հիմքից և չի տեսնում կենդանիների ու  
մարդկանց հոգեկան յերեւլույթների վորակական տարբերու-

թյունները: Այս տեսակետը մնասակար ե, վորովհետեղ թագ-  
ցնում և մարդու պսիխիկայի սոցիալ-գուսակարգային եյու-  
թյունը:

6. Գիտակցությունը, մարդու պսիխիկան պատմական  
ժկատեգորիան յե և փոխվում և հասարակական ձեվի և դասա-  
կարգային փոխհարաբերությունների (դասակարգային հասա-  
րակության մեջ) փոփոխման հետ միասին:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. МАРКС и ЭНГЕЛЬС—Немецкая идеология, стр. 10—11,  
15—17, 20—21.
2. «ՄԱՐՔՍԸ և ԵՆԳԵԼԸ արվեստի մասին» (Ժողովածու):
3. ԵՆԳԵԼԸ—«Բնության դիալեկտիկա», «Աշխատանքի մասնակ-  
ցությունը» հոգվածը:
4. Բնկ. ՄՏԱԿԻՆԻ գեկուցումը՝ կուսակցության 17-րդ համա-  
գումարում:
5. Համ Կ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց, գլուխ 4-րդ,  
բուժին 2-րդ—«Դիալեկտիկայի և պատմական մատե-  
րիալիզմի մասին»:

Այս թեմայից գրավոր աշխատանք ուղարկել այն գեպ-  
քում, յերբ ուսանողն արդեն մշակել և բավականաշատ գրակա-  
նություն ալյալ հարցերի շուրջը:

#### ՑՈՒՑՄՈՒԽՆՔՆԵՐ ԽՎԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ

##### Ուսմունք հոգեկան քունկցիաների մասին

Անցածի յուրացումից հետո, ուսանողների համար ավելի  
հասկանալի կլինի հոգեբանության առարկայի եյությունը: Հո-  
գեբանությունը սոցիալական գիտություն և և վոչ թե սոցիալ-  
բիոգիական, ինչպես ուզում եյին ցույց տալ վորոշ ուսակցիոն  
տեսաբաններ: Հոգեբանությունն իբրև գիտություն գործ ունի  
հոգեկան որինաչափությունների (կամքի, մտածության,  
խոսքի, լերեկակայության և այլնի) հետ, վորոնք իրենց հեր-  
թին պայմանավորված են սոցիալական որենքներով:

Բնորթակավ մարդու հոգեկան եյությունն իբրեւլ սոցիալական հատկություն, յերեք չպետք ե մոռանալ նրա նյութական հիմունքները, ընկ. Լենինը զեռ 1894 թվին գրած «Ի՞նչ են ժողովրդի բարեկամները» աշխատության մեջ ընդունվել ե հոգեկան յերեվոյթիների նյութական սուբստրատի—ներփային համակարգության ուսումնասիրության խիստ կարևոր նշանակությունը գիտական հոգեբանի համար: Խոսելով զուտ մտահայցողական մեթոդով առաջնորդվող և խոկական ուսումնասիրությունները զանազան վերացական ընդհանուրացումներով փոխարինող մետաֆիզիկ հոգեբանի մտսին, ընկ. Լենինը հակադրում է այդ «ետապստղին» խոկական գիտական հոգեբանին, վորը, «նա՝ այդ գիտական հոգեբանը, զին նետեց վիլխոտփայական տեսությունները հոգու մասին և ուղղակի ձեռնարկեց հոգեկան յերեավոյթիների նյութական սուբստրատի—ներփային պրոցենների ուսումնասիրմանը....» (Լենին, Յերկեր, 1-ին հատոր, հջ 64. ուսումնաբառ):

Հոգեկան պրոցենների ուսումնասիրությունը լրիվ կլինիկայն այն գեղքում, յերբ ծանոթանաք նրա հատկությունների հետ: Մարդու գիտակցությունը, գա անբաժանելի մի միասնություն ե բազմաթիվ մասերի փունկցիաների, այդ միասնությունն արտահայտվում ե առանձին փունկցիաների գործունեյության միջոցով, իսկ յուրաքանչյուր փունկցիա իր գործունեյությամբ անկախ չե, այլ գործում ե մյոււնների հետ համերաշխ կերպով: Փունկցիաների ուսումնասիրությունը մենք սկսում ենք ամենապարզից՝ զգայնությունից, վորովհետեւ ուսումնասիրության համար նպատակահարմար ձեվք պարզից սկսեն ե:

## Ա. Զգայնություն

Զգայնության փունկցիան մշակելիս, ամենից առաջ, ուսումնողը պետք է յուրացնի հետեւյալները.

1. Մեզնից անկախ և մեզնից դուրս գոյություն ունի յերեկոտիվ աշխարհ: Այդ որյականիվ աշխարհի յերերն ու առարկաները ազդում են մեր զգայաբանների վրա: Այդ ազդեցությունը պասսիվ չե, այլ ակտիվ ե, վորովհետեւ մարդու և բնության մեջ կա փոխազդեցություն: Մարդու ճանաչողությունը

«զգայական պրակտիկ գործունեյության» հետեւյանք եւ Ընկեր Լենինը զգայնությունը բնորոշում է իբրեւ «արտաքին աշխարհի որբազներ», իբրեւ «մատերիայի ազդեցության հետեւյանք մեր զգայաբանների վրա», իբրեւ «ոբյեկտիվ աշխարհի սուբյեկտիվ որբազն»: Զգայնության շնորհիվ ե, վոր մենք ճանաչում ենք առարկաների վորոց հատկանիշները (գոյն, համ, հոտ, կոշտություն և այլն):

Մարդու զգայնությունը վորակապես տարբերվում է կենադանիների զգայնությունից: «Հինգ զգայարանների կառուցվելը—դա համաշխարհային պատմության հետեւյանք ե» (Մարդու):

Զգայնությունների եյությունը հասկանալուց հետո, ուսանողը պետք է պարզի նրանց նշանակությունը:

«Այլ կերպ, քան զգայնությունների միջոցով, մենք առարկաների և վոչ մի ձեվի մասին, զարժման և վոչ մի ձեվի մասին վոչինչ իմանալ չենք կարող», «Բոլոր գիտությունները փորձից են, զգայնություններից, ընկալություններից», «Մեր գիտությունների միակ աղբյուրը զգայնություններն են» (Լենին):

Ուսանողի համար պետք ե պարզ լինի, վոր վոչ թե զգայնությունն և պայմանավորում ոբյեկտիվ իրականությունը, այլ այն, վոր զգայնությունները մարմինների արգյունք են, աշխարհի պատկերներն են» (Լենին):

Փիլիսոփայական այս հիմնական հարցի պարզաբանումից հետո, հեռակայողը պետք է ծանոթանա արտաքին աշխարհից յեկող ազդակների հետ: Այլ ազդակները յերկուսն են՝ ազդակներ—վորոնք ազդում են որպանիզմի վող պերիֆերիայի վրա (մեխանիկական, ջերմային, ելեկտրական և ցավ առաջացնող քիմիական) և պակեցիֆիկ ազդեցություն ունեցող (ձայնային ալիքները, լույսի ճռառագայթները և այլն):

Այս բոլորից հետո մասնացը պետք է ծանոթանա զգայնությունների զասակարգման հետ: Զգայությունները յերկու հիմնական խմբի յեն բաժանվում՝ արտաքին (տեսողական, լուսական, շոշափելիք, հոտոտելիք, ճաշակելիք) և ներքին՝ (որդանական և մկանաշարժողական): Ուսանողը զաղափար է կազմում նույնիվ զգայության վրակի և ինտենսիվություն հասկացողու-

թյան մասին, ինչպես նաև ծանոթանում եւ վերաբի և Ֆեխա-  
ների ուրենքի հետ՝ զգայնության ներքին և վերին շեմքերի  
մասին:

Դրանից հետո պետք եւ ձեռնարկել զգայության տեսակ-  
ներից ամեն մեկի ուսումնասիրությանը, ոգտագործելով Մ. Մագ-  
մանյանի և Կոռնիլովի հոգեբանության գրքերը, ինչպես և հա-  
յերեն լեզվով յեղած ֆիզիոգիայի դաստիքքերը:

Պետք եւ ծանոթանալ նաև զգայնությունների զարգացման  
թեմայի հետ, վորի մշակումից հետո պետք եւ կարողանալ պա-  
տասխանել հետեւյալ հարցերին:

1. Զգայնություն հասկացողությունը լենինյան արտա-  
ցոլման թերորիայի լույսի տակ:

2. Զգայնությունն իրենի իմացության աղբյուր: Զգայնու-  
թյան իդեալիստական և սատերիալիստական հասկացողու-  
թյունը:

3. Զգայնության սառարաժաժանությունը: Զգայնության հիմ-  
նական հատկությունները:

4. Զգայնության ամեն մի տեսակի հատկությունը և ֆի-  
զիոլոգիական հիմունքները:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԵՆԳԵԼՍ—«Բնության գիտելիտիկա», «Դիտողություններ»  
գլխի «Իմացություն» հառվածք:
2. ԼԵՆԻՆ—«Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ», եջ՝ 35—54:  
Հատոր 13-րդ (հայ. հրատ.), եջ՝ 140—143:
3. ԿՈՌՆԻԼՈՎ—«Հոգեբանության ձեռնարկ»:  
Ինչպես նաև անառոմիայի և ֆիզիոլոգիայի վերաբերյալ  
դասադրքեր:

#### Բ. Ը Մ Բ Ռ Ա Խ Ա Մ

Ամենից առաջ պետք եւ պարզել ըմբռնման եյությունը:  
Յեթե զգայնությունը տալիս է գաղափար իրերի և առար-  
կաների առանձին հատկանիշների մասին, ըմբռնումը հատրա-  
վորություն է տալիս ճանաչելու ամբողջական առարկան իր բո-  
լոր հատկանիշներով, այսինքն տվյալ առարկայի մասին ստա-

նալ ճիշտ, լիակատար գաղափար՝ դրա համար ել Ենգելսը խոսում  
է «իրերի և նրանց կերպարանավորությունների մասին մարդկային  
գլխում,—մեր գիտակցության մեջ»:

Միաժամանակ պետք եւ ընդգծել և այն, վոր ըմբռնման  
պրոցեսը պասսիվ, միակողմանի պրոցես չե: Մարդը ճանաչում ե  
իրականությունը բազմակողմանի, իրերի և առարկաների մասին  
ունեցած իր հասկացողությունները ճշտում եւ միայն պրակտի-  
կայի ընթացքում: Ինքը՝ ըմբռնումը, մեկուսացած գունկցիս չե:  
«Մարդու աչքի հատուկ կառուցվածքը մարդկային ճանաչողու-  
թյան բացարձակ սահմանումը չի հանդիսանում, մեր տեսողու-  
թյանը միանում են վոր միայն այլ զգայություններ, այլև մեր  
մտածության գործունեցությունը» (Ենգելս):

Պետք եւ ընդգծել և այն, վոր մարդը վոչ թե սոսկականո-  
րեն ըմբռնում և առանձին-առանձին առարկաները, այլև վորո-  
շում և այդ առարկաների տեղն ու կապակցությունը տիեզեր-  
քի մյուս յերեսությունների մեջ: Միաժամանակ և մարդու ըմբռու-  
նողությունը նպատակահարմար է, այսինքն մարդն իր համար  
պարզում և առարկայի նշանակությունը, նրա ոգտակար կամ  
վասակար կողմերը:

Վերսիֆյալի յուրացումից հետո պետք եւ ծանոթանալ ըմ-  
բռնման առանձնահատկությունների և նրա ախտաբանության  
հետ, վորից և հանել համապատասխան մանկավարժական յեղ-  
բակացություններ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԼԵՆԻՆ—«Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ», եջ՝ 74:  
ԼԵՆԻՆ—Հատոր 13-րդ, եջ՝ 89—92, 113—127:
2. ԿՈՌՆԻԼՈՎ—«Հոգեբանության ձեռնարկ»:  
Գրավոր աշխատանքի թեման պետք եւ լինի «Լավ ըմբռ-  
նուու որենքները»:

#### Գ. Ո Ւ Շ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ

Այս թեման մշակելիս պետք եւ առաջնորդվել պրոֆեսոր  
Գորբինինի կողմից առաջարկված հետեւյալ պլանով\*):

\*) Պահանջ առվագում և չնչին փոփոխություններով:

1. Ուշագրություն հասկացողության բնորոշումը.
2. Ուշագրության իդեալիստական և մատերիալիստական համացողությունները և նրանց բննադատությունը.
3. Ուշագրության ֆիզիոլոգիական տեսությունները և նրանց բննադատությունը.
4. Ուշագրություն առաջացնող և այն պահող պատճառները.
5. Կամավոր և ակամա ուշագրություն, ուշագրության կախվածությունը հատաքրքրությունից և կամքից: Անցումը կամավոր ուշագրությունից գեղի ակաման.
6. Ուշագրության կայունությունը և նրա տատանումները.
7. Ուշագրության կննարոնանալը և ցրվելը.
8. Ուշագրության ծավալը: Ուշագրության տիպերը.
9. Ուշագրության բաշխումն ու փոխանցումը.
10. Ուշագրության գերը մանկավարժության պրոցեսում: Ուշագրության գաստիարակումը:

Ուշագրությունը պետք է բնորոշել իբրև մեր հոգեկան գործողությունների կենտրոնացում և վորոշակիություն: Պետք է պարզել նրա գերն այն գեղքում, յերբ հարկավոր և մեր ուժերն ու կարսությունները կոնցենտրացիայի յենթարկել վորոշ ուղղությամբ: Ուշագրության միջոցով մերը հնարավորություն ունինք բազմաթիվ գործողություններից ընտրել մի քանիսը, վորպեսզի ամելի պարզ և լրիվ ճանանչենք իրականության այս կամ այն կողմը: Ուշագրությունն հանդիսանում է մեր հոգեկան հատկությունների կազմակերպ լածությունը:

Բոլորովին սխալ են՝ այն գիտնականները, վորոնք մարդուն վեր են ածում պաստիվ մի մեքենայի, զրկելով նրան ուշագրության ունակությունից:

Մեխանիստական տեսությունը բոլորովին անտես և առնում ուշագրությունը և առհասարակ մարդկային գործունեյության ամեն մի ակտիվություն:

Իդեալիստներն ընդհակառակը, ուշագրությունը համարում են ինչ վոր մի գերբնական, վոչսչով չպայմանավորվող կենսուժ:

Մարքսիզմը հերթում և ուշագրության և մեխանիստական, և իդեալիստական տեսությունները: Մարքսիզմը մարդկային ակտիվությունը պայմանավորում է հետեյալով՝

1. «Ակտիվության կախվածությունն անհատի սպասողական կարիքաներից, ևնուա անհետելողական թյունը (հին մատերիալիզմի) վոչ թե կայանում եր նրա նում, վոր նա ընդունում եր հարկադրական ուժերի գոյությունը, այլ նրանում, վոր նա միայն կանգնեց նրանց վրա, չձգանուի թափանցել հեռուն, հասնել մինչև այդ ուժերը ստեղծող պատճառները» (Մարքս):

2. Զարգացման և ակտիվության ներքին պատճառները (Լենին, հատոր 13, էջ 419—421): Հակագրությունների միասնությունը և պայքարը:

Ուշագրություն առաջացնող և այն պահող պատճառներից հատկապես պետք և հիշել հետեյալները.

1. Արտաքին ազդակակիությունը (ուժը), ծավալը և տեղուղությունը.

2. Հատուկ նշանակություն ունի յերեացող առարկայի ընդհատականությունը, մշտական դրզիոնները հետզհետե կղադաշնեղ վրա աղջկեցություն թողնելուց.

3. Խոշոր նշանակություն ունի նաև մեր հոգեկան վիճակը՝ ուշագրության ժամանակը.

4. Կարեւոր նշանակություն ունի նաև անցյալի փորձը, գիտելիքները և այլն:

5. Սովորությունը հեշտացնում են ուշագրության գերը: Լավ կլինի, յեթե գրակոր աշխատանքը՝ «Ուշագրության դարզացումը յերեխաների մոտ»՝ լրացին ուսուցչի անձնական փորձից վերցրած կոնկրետ նյութերով:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կ Ո Ռ Ն Ի Ռ Վ.—«Հոգեբանության ձևոնարկ»:

#### ԳՐԱԿՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՄԱ

1. Ուշագրության տիպերը, կոնկրետ վարեկ դասարանում  
2. Դպուի կազմակերպումը և ուշագրությունը:

#### Դ. Հ Ի Շ Ո Ւ Ր Յ Ո Ւ Ն

Ուսանողն ամսնից առաջ պետք և տարբերի մտապատճերը՝ ըմբռնումներից և գգայնություններից (ըմբռնումը և ըզդայնությունը հնատեանք են առկա անմիջականորեն աղջող առարկաների, իսկ մտապատճերները նախկին փորձում յեղած առարկաների պատկերների գերարտագրություն): Զգայնական մտա-

պատկերները «մեղանից գուրս գտնվող իրականության պատահերներն են» (Ենգելս), Պետք ե ընդգծել նաև զգայնությունների և մտապատկերների մյուս տարրերությունները (մտապատկերների ավելի քիչ ցայտունությունը, ավելի քիչ զարգությունները, համեմատաբար ավելի ազգատությունը ըմբռնումների նկատմամբ):

Միաժամանակ պետք ե նշել, վոր մտապատկերների և ըմբռնումների այդ տարրերությունները կամայական են և պայմանավորված են նրանով, վոր մտապատկերների գեղքում բացակայում և անմիջապես ազդող առարկան, վոր մտապատկերները միայն ուեալ առարկաների վերաբարդրված պատկերներն են՝ այդ առարկաների բացակայության ժամանակ:

Հիշողության տեսությունները քննարկելիս հասուն ուշադրություն պետք ե դարձնել հիշողության զուգորդումների և ստրուկտուր տեսությունների վրա: Պետք ե համոզին, վոր հիշողությունն առանձին տպագրությունների (ըմբռնումների) մեջ խանիկական շարանը չե, ինչպես ուզում են ցույց տալ. զուգորդման տեսության ներկայացուցիչները: Հիշողությունը տրամաբանական ընդհանրացումների բարդ պրոցես ե՝ յենթակա անհատի ակտիվությանը:

Միաժամանակ պետք ե լուսաբանել ստրուկտուր տեսության իդեալիստական եյությունը:

Հիշողության տիպերը մշակելիս պետք ե նշել, վոր տիպերի հարցը քարացած ու մետաֆիզիկություն չե, վոր պետք ե ըմբռնել, վոր «ընդհանրապես» հիշողություն գոյություն չունի, այլ վոր նա կատարելագործվում ե, զարգանում և փոփոխվում և անհատի աճման գուգընթաց: Հիմնական՝ հիշողության քարացած տիպերի շարագրումը չե, այլ նրա բազմակողմանի զարգացումն ու կատարելագործումը բացատրելու ե:

Հիշողության զարգացման ինդիրները քննելիս պետք ե պարզել հիշողության զարգացման հիմնական ուղին, այն ե՝ ակամա հիշողությունից գեղի ծրագրված—կամային հիշողությանն անցնելը, մեխանիկականից՝ տրամաբանականը, պատկերավորից՝ խոսքայինը: Պետք ե նաև իրատ քննադատության յենթարկել այն տեսակետը, ըստ վորի տրամաբանական հիշողությունը մինչև 14 տարեկան հասակը բոլորովին բացակայում ե: Այդպիսի հասկացողությունը ճիշտ չե և որյեկտիվորեն արդարացնում ե մեխանիկորեն անգիր անել տալու հիանդամայն սիալ մեթոդը:

Միաժամանակ պետք ե նշել վոր յերեխաների մոտ վօրոշ տեսակնենց անպայման նկատվում և նյութը բառացիորեն կրկնելու, փոխանակ ինքնուրույն ձևակերպում տալու յուրացված նյութին: Ուսուցման ժամանակ պետք ե հատուկ ուշադրություն դարձնել անցած նյութը աշակերտների կողմից ինքնուրույն կերպով ձևակերպելու հարցին: Հիշողության վորակական առանձնահատկությունների հարցը պարզելիս, պետք ե ընդգծել հիշողության միամնությունն ու փոխադարձ կապը հոգեկան մյուս փունկցիաների հետ (ըմբռնում, մտածություն, կամք, ուշադրություն և այլն): Միաժամանակ հիմնական հարցերից մեկը պետք ե դառնա հիշողության վորակական փոփոխությունների խնդիրը՝ յերեխայի փորձի կուտակման հետեւանքով: Յերեխայի հիշողության առանձնահատկությունները կախված են նրա կյանքի կոնկրետ պայմաններից:

Հիշողություն և ուսուցում գլուխը մշակելիս պետք ե ամենից առաջ նշել, վոր ուսուցվող նյութերը միատեսակ կերպով չեն հիշվում, վոր զա կախված ե նյութի բովանդակությունից և ամեն մի մասի տեղից ու նշանակությունից: Ուսուցվելիք նյութի քանակի ազդեցությունը նույնական հարցերի ունի: Ամբողջովին անգիր անելու առավելությունը, այն գեղքում յերբ գործ ունենք ծավալով փաքք, ճեղի ու բովանդակությամբ իրար կատվող նյութի հետ (փոտանավորներ անգիր անելը) և ընդհակառակը, յեթե նյութի ծավալը մեծ ե, բովանդակությունն ել բարդ, ապա լավ և մաս առ մաս անգիր անել (որինակ՝ ուսար լեզուների բառեր սովորելը): Լավ կինի վերապատմել նյութը նախքան ամբողջը յուրացնելը: Նյութի յուրաքանչյուր գլուխն անցնելուց հետո պետք ե անպայման վերապատմել, զորն ոգտակար ե միայն այն գեղքում, յերբ աշակերտը մերենայաբար չի կրնում այդ նյութը, դրբի կամ ուսուցչի խոսքերը, այլ կրկնողությունը կրում ե ակտիվ և գիտակցական բնույթի, նյութն անցնելիս հատկապես պետք ե կիրառել ցուցադրումը (ցուցադրական տալը): Սովորելու տեմպը՝ (սկզբում գանդաղ, վերջում պեկի արագ):

Հիշողության կորուստը: Հիշողության գաստիարակումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
1. Կ Ա Ռ Ն Ի Ռ Ո Վ ։ «Հոգերանության ձեռնարկ»:

Ե. Ունակություններ (սովորույթներ)

Ամենից առաջ պետք ե պարզել ունակությունների կամ սովորույթների խոշոր, նշանակությունը՝ մտրպակային պրակարի:

**Կայի համար:** Սովորայթը առաջանում է վարժականների, այսինքն բազմից կրկնվող նպատակահարմաք շարժումների հետեւանքով: *Սովորույթը պետք է տարբերել բնագավային և ռեֆերենտալ գործող լեյտուններից, մորոնք ժառանգական են և իրենց հիմնական համակություններով ստացական են: Սովորույթն անհամական է ինսափորձի հետևանքով և ձեռք բերում է:*

Մարդու մաս յուրաքանչյուր դործողություն, նախքան ոտքությի զանալը պահանջում է կամացին աշխատանք, ուժերի մեծ լուրում, Հետագայությունն եւ, վոր ամյալ շարժումը բաղկիռ կրկնվելու հետեանքով ունակությունն է վերածվում: Այսպիսով գիտակցված շարժումը դառնում է ավտոմատ Ռևոլվությունների գերը հակայական և մարդու կյանքում, նա խնայում է մեծ քանակությամբ հներգիա և մտավոր, և փիզիկական, և այլ ինսայլած հներգիան ուստակործվում է նորք անձանությերեւություններ ըմբռնելու ու ճանաչելու, մարդու պատկարիկան ու դիակելիքաների պաշարը հարստացնելու համար: Հազերսն Ձեմըը չափազանցությունների մեջ ընկնելով պնդում եր, վոր մարդու կատարած 1000 գործողությունից 99.9% վերաբերում է ունակություններին: Այսուհետեւ պետք է ծանօթանալ ունակությունների հշտակության և նրանց դաստիարակության ինդիկանների հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կ Ո ՌՆԻ Ի Հ Ա Վ. — «Հոգեբանության ձեռնարկ»:

ՅԵՐԵՎԱՆԿԱՐԱՐԱՆ

Յւրեակայություն, գլուխը մշակել լսա լնկ. Մաղմանյանի  
նյութերի, ոպտիկակ Կռոնիլովի «Հոգեբանության ձեռնարկ»-ից:  
Գրել գրավոր աշխատանք «Յերեխայի յերեակայությունը և  
նրա դաստիարակությունը» թեմայի շուրջ.

ՄԱԿԱՐԵՆ

ԾԱՆՈԹ. — Մըրագրում նշված մասցած գլուխների մասին համապատասխան ցուցմունքներ չի արփում, վորովհետեւ ուսանողի ձեռքի տակ համապատասխան ազդյուրներ և նյութեր չկան: Այդ հարցերի շուրջն ուսանողը ամռանը կը սի դասախոսություններ:

## «Ազգային գրադարան



NL0145642

